ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ՄԵԼՔԻՍԵԴԵԿՅԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՀՐԱՏՐ ԹԱՄՐԱԶՅԱՆ

XIX դ. 70-ական թվականները հայ պարբերական մամուլի պատմության մեջ նշանավորվեցին որպես վերելքի տարիներ։ «Մշակի» շոնդալից մուտքն աշխուժություն առաջացրեց արևելահայ լրագրության մեջ։ Թարմացավ պահպանողական «Մեղու» շաբաթաթերթը։ Այդ տարիներին սկսեց հրատարակվել նաև «Փորձ» հանդեսը։ Ավելի ուշ՝ 1879 թ., լույս տեսավ ևս մեկ պարբերական. դա Գ. Տեր-Մելքիսեդեկյանի «Աշխատանք—Труд» երկլեզվյա (հայերեն և ռուսերեն) շաբաթաթերթն էր։ Երկար ժամանակ այն ըստ էության անհայտ էր մնացել հայ պարբերական մամուլի մասնագետներին։ Հայտնի էր միայն, որ շաբաթաթերթը հրատարակվել է Թիֆլիսում՝ 1880—1882 թթ., Գ. Տեր-Մելքիսեդեկյանի խմբագրությամբ։ Որոնումներից հետո միայն վերջին տարիներին Վ. Ավետիսյանը հայտնաբերեց շաբաթաթերթի ամբողջ հավաքածուն (բացառությամբ 1880 թ. № 6-ի), որը պահվում էր Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում։ Ըստ երևույթին «Աշխատանք—Труд» շաբաթաթերթը մեր հետազոտողներին անհայտ էր մնացել, քանի որ միաժամանակ նաև ռուսերեն հրատարակվելու պատճառով պահվել է գրադարանի ռուսական մամուլի բաժնում։ Սակայն, եթե հայ մասնագետները ստույգ տեղեկություններ չունեին շաբաթաթերթի մասին, ապա ռուս պարբերական մամուլի հետազոտողներին այն վաղուց էր հայտնի։ 1879—1882 թթ. լույս է տեսել «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի ընդամենը 11 համար (1879 թ.՝ մեկ, 1880 թ.՝ 7, 1881 թ.՝ 2, 1882 թ.՝ մեկ համար)[1]։

Մինչև թերթի հրատարակությունը, նրա խմբագիր Գ. Տեր-Մելքիսեդեկյանը Թիֆլիսի հայ հասարակությանը հայտնի էր միայն մի քանի գրքույկներով՝ «Մի համառոտ հայացք 19-րդ դարի հայ հոգևորականության վրա» (1874), «Մեր Կովկասի հիմիկվան լրագիրները» (1878), «Նվեր քյասիբ դեղջցիներին» (1879) և այլն, որոնցում քննում էր հայ գյուղում տիրող վիճակը։

Չնայած թողած գրական համեստ ժառանգությանը, Գ. Տեր-Մելքիսեդեկյանն արժանացել է մեր ժամանակի հետազոտողների ուշադրությանը[2]։ Հենվելով վերոհիշյալ գրքույկների վրա, նրանք Գ. Տեր-Մելքիսեդեկյանին ներ-

---

[1] «Русская периодическая печать 1703—1894 гг.», составил и издал Н. М. Лисовский, вып. I, СПб., 1895, с. 96; «Русская периодическая печать (1702—1894)», под ред. А. В. Дементьева, М., 1959, с. 605.

[2] *Գ. Տեր-Մելքիսեդեկյանի նշված գրքույկներին առավել հանգամանորեն անդրադարձել են Ս. Զուրաբյանը՝ «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր» (Երևան, 1959, էջ 392) և Կ. Դանիելյանը՝ «Հայ գյուղագրությունը 19-րդ դարում» (Երևան, 1973, էջ 102)։*

կայացրել են որպես դեմոկրատական ուղղության ներկայացուցիչ, Մ. Նալբանդյանի հետևորդ։ Սակայն «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի մասին խոսելիս, նյութի բացակայության պատճառով, նշված հեղինակները ստիպված բավարարվել են ենթադրություններով, ինչպես նաև Գ. Տեր-Մելքիսեդեկյանի ժամանակակիցների հուշերով, որոնք գերազանցապես կենսագրական բնույթ ունեն[3]։

«Աշխատանք—Труд» շաբաթաթերթի առաջին վերլուծությունը կատարել է Վ. Ավետիսյանը։ Նա բացառապես փաստական նյութի հիման վրա՝ իր ձեռքի տակ ունենալով թերթի հավաքածուն, հերքել է այն կարծիքը, ըստ որի Գ. Տեր-Մելքիսեդեկյանը դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչ է և Մ. Նալբանդյանի հետևորդ[4]։ Եվ իրավամբ, «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի առաջին իսկ համարից Գ. Տեր-Մելքիսեդեկյանը ներկայանում է որպես բուրժուական գռեհիկ քաղաքատնտեսության ջերմեռանդ քարոզիչ։ Զինվելով բուրժուական գռեհիկ քաղաքատնտեսության «ամենաթարմ» նվաճումներով, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը լայնորեն սկսում է այն պրոպագանդել իր թերթի էջերում։ «Մտնելով հասարակաց ասպարեզ,— գրում է նա,— «Աշխատանքը» հայտնում է իրեն բարեկամ բոլոր մարդկության և այրված սրտով փափագում է կյանքի մեջ մի օր ավելի շուտ տեսնել մարմնացած արդար աշխատանքի սկզբունքը»[5]։ Այս սկզբունքը ընդունելով որպես նշանաբան, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը փորձում է լուծել ժամանակի ամենացավոտ հարցերից մեկը՝ մշակների ու դումարատերերի փոխհարաբերությունների խնդիրը։ «Հայտնի է, որ ամեն հասարակության մեջ,— նշում է նա,— կան մարդիկ, որոնք սկզբում որևիցե միջոցով, մի հանգուցյալի կտակով, իրենց ուժով, թե որևիցե պարապմունքով մի հայտնի գումար են ձեռք բերում, ապրում են այդ գումարի մի մասով, դումարի մնացածն էլ աշխատում են շահեցնել ինչքան կարելի է շուտ միջոցում։ Այդ նպատակով նրանք սովորաբար գտնում են գումար չունեցող անձանց, որոնք հանձն են առնում ծառայել գումարատերերի նպատակին մի հայտնի պայմանով, որի զորությունով այդ ծառայող անձինք իրանց արած ծառայության համար պիտի հայտնի վարձ ստանան»[6]։ «Գումարատերերն ու մշակները,— շարունակում է Գ. Տեր-Մելքիսեդեկյանը,— մին մինի օգնության կարոտ լինելով պայման են կապում ու էդ պայմանով հայտնի պարտականություններ են հանձն առնում և նրանցը կատարում և այդպիսով երկուսն էլ շահվում են»[7]։ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը գտնում է, որ պայմանը կապելուց հետո թե՛ գումարատերերը, թե՛ մշակներն իրավունք չունեն խախտելու այն։ Պայմանից հրաժարվել՝ «Մշակի կողմից նշանակում է խաբեություն և արդարության ընդդեմ վարվում։ Նույնը պիտի հասկանալ և գումարատերերի մասին»[8],—եզրակացնում է նա։ Ակնհայտ է, որ այստեղ հեղինակի առաջադրած «արդար աշխատանքի սկզբունքը» բուրժուական գռեհիկ քաղա-

---

3 Գևորգ Ղարաջյան, Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Վ. Միրաքյանի ֆ., № 180, 183։

4 Վ. Ավետիսյան, Փաստերը հերքում են («Լենինյան ուղիով», 1974, № 9, էջ 91)։

5 «Աշխատանք—Труд», 1879, № 1։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

քատնտեսության մեջ հայտնի «շահերի ներդաշնակության տեսության» տարբերակներից է։

Սակայն որտեղի՞ց է գալիս այս հղկված զուտհիկ տեսությունը։ Թերթի հոդվածներից մեկում Գ. Տեր-Մելքիսեդեկյանն ակնարկում է անգլիացի բուրժուական տնտեսագետ Ու. Տորնտոնի (1813—1880) անունը։ Վ. Ավետիսյանը գրում է, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանի շաբաթաթերթի հոդվածներում «...կգտնենք և՛ պրուդոնիզմ, և՛ բուրժուական զուտհիկ քաղաքատնտեսության դպրոցի ներկայացուցիչների (Ուիլյամ Տորնտոնի և այլոց) թեորիաները և Գ. Արծրունու հայացքները...»[9]։ Վ. Ավետիսյանը Ու. Տորնտոնի և Գ. Տեր-Մելքիսեդեկյանի միջև եղած կապի մասին նշում է, հենվելով միմիայն վերջինիս՝ Ու. Տորնտոնի մասին արած թռուցիկ ակնարկի վրա։ Սակայն Վ. Ավետիսյանին հայտնի չէր, որ «Աշխատանք—Труд»-ի տնտեսագիտական բնույթի հոդվածներում, որոնք վերլուծել է ինքը, ընթերցողը կգտնի ամբողջական հատվածներ Ու. Տորնտոնի «Աշխատանք» աշխատությունից։ Ուստի հարկ ենք համարում քննել նաև վերջինիս տնտեսագիտական հայացքները, անշուշտ, հիմնականում Գ. Տեր-Մելքիսեդեկյանի «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի հետ ունեցած առնչություններով։

Ու. Տորնտոնը մի շարք տնտեսագիտական և փիլիսոփայական աշխատությունների հեղինակ է։ Իր տնտեսագիտական աշխատություններում նա մասնավորապես շոշափել է աշխատավարձին, աշխատանքի և կապիտալի փոխհարաբերություններին, արհմիություններին նվիրված հարցեր։ Այդ աշխատություններից առավել հայտնի է «Աշխատանք» տրակտատը (1869)։ Մանրթանալով 1870 թ. ռուսերեն թարգմանված այդ աշխատությանը, մենք հանգել ենք այն համոզման, որ այն համապատասխանում է «Աշխատանք—Труд» շաբաթաթերթին ոչ միայն անվանումով, այլ նաև այնտեղ եղած տնտեսագիտական հոդվածների բովանդակությամբ։ Դրանում համոզվելու համար բավական է կատարել մի քանի համեմատություն։ Ահա թե ինչ է գրում Ու. Տորնտոնն իր աշխատության «Բանվորական հարցի մասին» գլխում. «...դուք (բանվորները—Հ. Թ.) զրկված եք այն հարմարանքներից, առանց որոնց աշխատանքն ապարդյուն է։ Զրկված եք դրանցից ձեր սեփական ծնողներին, ձեր նախահայրերի մեղքով կամ դժբախտության հետևանքով։ Դուք չունեք ո՛չ հող, ո՛չ նյութեր, ո՛չ աշխատանքի գործիքներ։ Չունեք սննդի պաշարներ՝ ձեր գոյությունը պահպանելու համար։ Աշխատանքի այդ անհրաժեշտ միջոցներից դուք կարող եք օգտվել միայն նրանցից, ովքեր ունեն դրանք, նրանց առաջարկած պայմաններով։ Բայց այդ մարդկանց պաշարները փոխառնված չեն ձեզնից։ Ձեզ համար նրանց պաշարապահությունը չարիք չէ, այլ մեծագույն բարիք է, քանի որ նրանք կարող են մատակարարել այն, ինչ որ պակասում է ձեզ»[10]։ «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի «Մշակների հարցի առթիվ» հոդվածում Գ. Տեր-Մելքիսեդեկյանը գրում է. «Մշակները զրկված են իրենց կամ յուրյանց հայրերի, նախահայրերի մեղքից, էն միջոցներից (փողից) առանց որոնց իրենց աշխատանքը ապարդյուն է։ Մշակը չունի ո՛չ հող, ո՛չ նյութեր, ո՛չ աշխատանքի միջոցներ՝ գործիքներ։ Նա չունի կերակրի պաշար իր գոյությունը պահպանելու։ Էդ միջոցներից նրանք կարող են օգուտ

---

9 «Լենինյան ուղիով», 1974, № 9, էջ 87։

10 В. Т. Торнтон, Труд, СПб., 1870, с. 136.

քաղել... միմիայն գոմարատերերից, որոնք ունեն այդ միջոցները (փողը), էն պայմաններով, ինչ պայմաններ որ նրանք կառաջարկեն մշակներին։ Թող խելքներնին գլուխները հավաքեն, լավ հասկանան մշակները..., որ գոմարատերերի այդ պաշարները նրանց՝ մշակների համար վատ բան չէ, այլ ընդհակառակը, իսկական բարեգործություն է, որովհետև մշակներին նրանք տալիս են... այն, ինչ որ նրանց պակասում է»[11]։

Ինչպես տեսնում ենք, Ու. Տորնտոնը և նրա հայ քարոզիչը, բուրժուազիային ներկայացնելով որպես աշխատավոր դասակարգի բարերարի, անցնում են կապիտալիստական կարգերի բացահայտ շատագովության բոլոր սահմանները։ Եթե գռեհիկ քաղաքատնտեսության որոշ ներկայացուցիչներ զանազան մեթոդներով ձգտում են քողարկել կապիտալիզմի հակասությունները, ապա Ու. Տորնտոնը քողարկում է դրանց առաջացման բուն պատճառը»՝ դրանք համարելով մարդու բնությունից բխող հավերժական հակասություններ։ Նա «աշխատանքի արդար վարձահատուցման» սկզբունքը, որը Գ. Տեր-Մելքիսեդեկյանի նշանաբանն էր, համարում է այն, ինչ կապիտալիստը վարձատրում է բանվորին՝ նրա հետ կնքած պայմանագրի համաձայն։ Իսկ ինչ վերաբերում է կապիտալիստի յուրացրած շահույթին, ապա Ու. Տորնտոնն այն համարում է կապիտալիստի օրինական եկամուտը, քանի որ շահույթի գոյացման աղբյուրը կապիտալիստի ներդրած կապիտալն է։ Ըստ նրա, այդ պատճառով էլ բանվորն իրավունք չունի պահանջել ավելին, քան վճարում է նրան կապիտալիստը։ Ու. Տորնտոնը բացահայտորեն դեմ է արժեքի աշխատանքային տեսությանը։ Բանվորը ստանում է կապիտալիստից իր աշխատանքի լրիվ արժեքը, գրում է նա։ Ու. Տորնտոնը ապրանք է համարում ոչ թե աշխատուժը, այլ աշխատանքը։ Եթե բուրժուական գռեհիկ քաղաքատնտեսության ներկայացուցիչներն ապրանքի արժեքը նույնացնելով նրա դնի հետ գտնում են, որ այն որոշվում է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ, ապա Ու. Տորնտոնն այս հարցում գնում է ավելի հեռու։ Նա գտնում է, որ ապրանքի գնի մեծությունը կախված է ոչ թե առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից, այլ այն բանից, թե որքան կարող է ապրանքատերը հետաձգել իր ապրանքի իրացումը[12]։ Ըստ Ու. Տորնտոնի, եթե վաճառողը հնարավորություն ունի վաճառքի չհանել իր ապրանքների ամբողջ զանգվածը, ապա այդ դեպքում ապրանքի գինը կախված կլինի վաճառողի գնահատությունից։ Նրա կարծիքով գնորդի գնահատությունը ապրանքի գնի վրա ազդում է միայն այն ժամանակ, երբ վաճառողը սպառում է իր ապրանքի իրացումը հետաձգելու բոլոր հնարավորությունները։ Ու. Տորնտոնը գների իր այս տեսությունը փորձում է կիրառել բանվորների և կապիտալիստների փոխհարաբերության մեջ։ Ի տարբերություն ապրանքային շուկայի, աշխատանքի շուկայում որպես ապրանքատեր հանդես է գալիս բոլոր միջոցներից զուրկ բանվորը։ Այստեղ արդեն դրության լիիրավ տերը գնորդն է, այսինքն՝ կապիտալիստը, և աշխատանք ապրանքի գինը թելադրում է միմիայն նա, քանի որ աշխատանք վաճառողը զրկված է իր ապրանքի իրացումը հետաձգելու որևէ հնարավորությունից։ Հենց դա է պատճառը, որ աշխատանքի գինը շուկայում գնալով նվազում է։ «Հասարակ աշխատողը,— գրում է Ու. Տորնտոնը,— կմեռ-

---

11 «Աշխատանք—Труд», 1880, № 4։

12 В. Т. Торнтон, նշվ. աշխ., էջ 41։

նի քաղցից, առանց աշխատավարձ ստանալու, իսկ կապիտալիստը, քանի դեռ նրա կապիտալը չի սպառվել, ստիպված չէ մեռնել քաղցից, այն պատճառով, որ նրա փողերը չեն վերջացել։ Հետևաբար. քանի որ հարցը հանգում է նրան, թե ով ավելի երկար կդիմանա, ապա ակնհայտ է թվում, որ առաջինն անձնատուր կլինի աշխատանքը։ Անկասկած այդպես պետք է լինի հետևանքը, երբ աշխատանքն ամենևին կապված չէ կապիտալի հետ և երբ միաժամանակ տերերը գործում են համատեղ»[13]։ Ահա թե Ու. Տորնտոնի այս միտքն ինչպես է ներկայացրել Գ. Տեր-Մելքիսեդեկյանը. «Հասարակ մշակը կմեռնի քաղցից, եթե չստանա գոնե 10 ռուբլի ամսական վարձ, այնինչ գումարատերը, քանի որ ձեռքի գումարը չի հատել, չի ստիպված մեռնել քաղցից, թեկուզ օգուտ էլ չստանա իր գումարից։ Հարցը ինչպես տեսնում ենք, նրա մեջ է, թե ով ավելի երկար կդիմանա։ Հասկանալի է, որ. ...գումար չունենալու պատճառով պետք է անձնատուր լինի առաջինը։ Անկասկած էդպես պետք է լինի հետևանքը, երբ աշխատանքը ամենևին չի կապված գումարի հետ և երբ գումարատերերը միևնույն ժամանակ գործում են ընկերովի...»[14]։

Ու. Տորնտոնի կարծիքով այստեղ ոչ մի անարդարություն չկա, և բանվորն իրավունք չունի բողոքել դրա դեմ։ Բանվորը ոչ միայն իրավունք չունի կապիտալիստից պահանջել որոշակի վարձատրություն, այլև աշխատանք[15]։ Ինչպես ապրանքային, այնպես էլ աշխատանքի շուկայում վաճառողը, որի դերում տվյալ դեպքում հանդես է գալիս բանվորը, իրավունք չունի պարտադրել գնորդին (կապիտալիստին) իր ցանկացած գինը, իրավունք չունի պարտադրել նրան նաև գնելու իր ապրանքը, այսինքն՝ աշխատանքը, քանի որ գնորդին կարող է ձեռնտու չլինել վաճառողի առաջարկած գինը և, որ ամենակարևորն է, նա կարող է այդ ապրանքի կարիքը ընդհանրապես չունենալ[16]։ Արդար է միայն այն գինը, որը ձևավորվում է շուկայական մրցակցության ընթացքում, երբ գնորդը և վաճառողը փոխադարձ համաձայնության են գալիս, գրում է Ու. Տորնտոնը։ Սակայն, քանի որ բանվորները զրկված են աշխատանքի ավելի նպաստավոր վաճառքի հնարավորությունից, ապա նրանք համաձայնվում են նույնիսկ ամենաչնչին վարձատրությանը։ Ուրեմն, ըստ Ու. Տորնտոնի, անարդար չէ նույնիսկ ամենաչնչին վարձատրությունը, քանի որ այն սահմանվում է փոխադարձ համաձայնությամբ[17]։ Միակ բանը, ինչից կարող են բողոքել բանվորները, այն է, որ նրանք կապիտալիստ չեն ծնվել, գրում է Ու. Տորնտոնը[18]։ Միևնույն ժամանակ Ու. Տորնտոնը ձգտում էր բանվորի և կապիտալիստի հարաբերությունները ներկայացնել որպես փոխշահավետ կապեր։ Ըստ նրա, ամենից առաջ այդ հարաբերությունները շահավետ են բանվորների համար, որովհետև, զուրկ լինելով արտադրության միջոցներից, նրանք իրենց գոյությունը կարող են պահպանել միայն դրանց միջոցով։ Բանվորներին վնասողը ոչ թե կապիտալիստներն են, այլ իրենց սեփական աղքատությունն է, որը նրանց հնարավորություն չի տալիս հաջողու-

---

13 Նույն տեղում, էջ 137։

14 «Աշխատանք—Труд», 1880, № 4։

15 В. Т. Торнтон, նշվ. աշխ., էջ 118։

16 Նույն տեղում, էջ 111—112։

17 Նույն տեղում, էջ 118։

18 Նույն տեղում։

թյամբ մրցակցել կապիտալիստների հետ։ Այդ պատճառով էլ նրանք պետք է միավորվեն արհմիությունների մեջ, անդամավճարներ հավաքեն, որն անհրաժեշտ է աշխատանք ապրանքի վաճառքը հետաձգելու համար. այսինքն՝ աշխատանք ապրանքը ավելի նպաստավոր գնով վաճառելու համար[19]։ Կապիտալիստները, իհարկե, կարող են դիմանալ նաև այս դեպքում, սակայն առանց աշխատանքի շուտով նրանց կապիտալը կսպառվի և նրանք կդադարեն կապիտալիստ լինելուց[20]։ Այդ պատճառով էլ նրանք սովորաբար ավելի շուտ են հանձնվում այս մրցակցության մեջ։ Բանվորներն այս միջոցով պետք է պայքարեն աղքատության դեմ։ Ահա այս է Ու. Տորնտոնի «աշխատանքի արդար վարձատրության» գռեհիկ տեսության համառոտ բովանդակությունը։ Իհարկե, այս տեսությունը Գ. Տեր-Մելքիսեդեկյանն «Աշխատանք—Труд»-ի էջերում մատուցում է ավելի մատչելի ձևով։

«Աշխատանք—Труд»-ի խմբագիրը, սակայն, որոշ իմաստով խուսափում է Ու. Տորնտոնի ծայրահեղ ռեակցիոն եզրակացություններից։ Մասնավորապես նրա հոդվածներում չկա վերջինիս այն միտքը, որ բանվորն իրավունք չունի աշխատանք պահանջել կապիտալիստից։ Բայց նրա մոտ որոշակիորեն ընդգծված է Ու. Տորնտոնի այն եզրակացությունը, որ մշակները պետք է աշխատեն գումարատերերի համար «էն պայմաններով, ինչ պայմաններ որ նրանք կառաջարկեն մշակներին»[21] և «չհամարձակվեն ձեռք բարձրացնել հարստի վրա քիչ վարձ ստանալու պատճառով»[22]։ Այսինքն՝ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը համաձայնվում է Ու. Տորնտոնի այն եզրակացության հետ, թե որքան էլ չնչին լինի վարձատրությունը, բանվորները չպետք է բողոքեն։ Այսպիսով «նալբանդյանի հետևորդը» ոչ միայն չի բողոքում շահագործման դեմ, այլև արդարացնում է այն։ Հետևելով Ու. Տորնտոնին, նա գրում էր, որ մշակներին ճնշողը ոչ թե գումարատերերն են, այլ հենց իրենց սեփական աղքատությունը, որը նրանց հնարավորություն չի տալիս մրցելու գումարատերերի հետ։ Այդ պատճառով նա նույնպես գտնում է, որ բանվորները պետք է միավորվեն արհմիությունների մեջ, որոնք աշխատանքի վաճառքի համար ավելի նպաստավոր հնարավորություն են ստեղծում[23]։

Եթե եվրոպական երկրներում բանվոր դասակարգը բավականաչափ կազմակերպված ուժ էր և բուրժուազիայի դեմ մղվող պայքարում կարողանում էր հասնել որոշակի տնտեսական հաջողությունների, ապա Անդրկովկասում բանվոր դասակարգը դեռևս նոր էր կազմավորվում որպես դասակարգ և գտնվում էր ծայրահեղ թշվառ վիճակում։ Աշխատավարձն այնքան չնչին էր, որ հազիվ էր բավական բանվորի ֆիզիկական գոյությունը պահպանելու համար և խոսք անգամ չէր կարող լինել աշխատուժի նորմալ վերարտադրության մասին։ Այնպես որ, Ու. Տորնտոնի «աշխատանքի արդար վարձատրության» տեսությունը, որն այնքան ոգևորել էր Գ. Տեր-Մելքիսեդեկյանին և պրոպագանդվում էր նրա կողմից, դառնում էր առավել ռեակցիոն տեսություն՝ Անդրկովկասի հետամնաց պայմաններում։

---

19 Նույն տեղում, էջ 145—146։

20 Նույն տեղում, էջ 146։

21 «Աշխատանք—Труд», 1880, № 4։

22 Նույն տեղում, 1879, № 1։

23 Նույն տեղում, 1880, № 4։

Առավել ռեակցիոն է Ու. Տորնտոնի վերոհիշյալ աշխատության այն մասը, որտեղ նա, խոսելով աղքատության և թշվառության մասին, դրանք համարում է մարդկային հասարակության հավերժական ուղեկիցներ։ Տուրք տալով մալթուսականությանը, նա գտնում էր, որ աղքատ խավերի գոյությունն ավելորդ է երկրի վրա և հասարակությունը ոչ մի պարտք չունի նրանց հանդեպ[24]։ Ահա թե այդ մարդատյաց տողերն ինչպես են տեղայնացվում Գ. Տեր-Մելքիսեդեկյանի կողմից. «Աղքատը,— գրում է նա,— թող մեռնի քաղցածությունից, քանի որ կարող էր աշխատել ու չի աշխատում, որովհետև առանց աշխատելու, ողորմություն ուզելով նա վիրավորում է արդար աշխատանքի սկզբունքը, անպատվում է Արարչի ձեռքը, որը ստեղծել է նրան ու դրել երկրիս վրա՝ արդար քրտինքով աշխատելու իր հացը»[25]։

Կ. Դանիելյանը հայ գյուղագրությանը նվիրված իր աշխատության մեջ նշելով հանդերձ, որ հնարավորություն է ունեցել ծանոթանալ «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի միայն վերջին համարին, մեծ համոզվածությամբ գրել է, թե «Հայ պարբերական մամուլի պատմաբանները «Աշխատանք—Труд»-ի էջերում կարող են գտնել գյուղացիական դեմոկրատիայի այն գաղափարախոսին, որը փորձում է գրաքննչական հետամտումների հսկողության վրայով հասարակությանը ասել իրոք դառնաղի ճշմարտություններ»[26]։ «Աշխատանք—Труд»-ին և նրա խմբագրին տված իր այս գնահատականը Կ. Դանիելյանը փաստորեն պաշտպանել է նաև վերջերս լույս ընծայած մի հոդվածում[27], թեև նրան արդեն հայտնի էր շաբաթաթերթի հավաքածուն։ Չնայած այդ հոդվածում Գ. Տեր-Մելքիսեդեկյանը ներկայանում է ավելի զուսպ բնութագրով, այնուհանդերձ, նա դարձյալ ըստ էության աշխատավորների շահերի պաշտպան է, դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչ, «նալբանդյանական ուղղությանը» զինվորագրված մեր գրողներից և հրապարակախոսներից մեկը[28], և դա այն դեպքում, երբ Կ. Դանիելյանին հայտնի է Գ. Տեր-Մելքիսեդեկյանի թե՛ վերը քննված գրույթների բովանդակությունը, թե՛ դրանց առնչությունները Ու. Տորնտոնի «Աշխատանք» աշխատության հետ։ Այսպես, օրինակ, «Աշխատանք—Труд» շաբաթաթերթում «ազատարար» Ալեքսանդր II-ի սպանության առթիվ Գ. Տեր-Մելքիսեդեկյանի գրած ողբը և բացահայտ թշնամական վերաբերմունքը սոցիալիստական ուսմունքների, սոցիալիստ-հեղափոխականների նկատմամբ, որոնց նա անվանում է չարաննգներ, Կ. Դանիելյանը որակում է որպես «ծածկախոսության» ձև[29]։ Վերծանելով այդ «ծածկախոսությունը», նա եզրակացնում է, որ հայհոյելով ցարասպաններին, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը միաժամանակ ցանկացել է ցույց տալ նրանց գործի արդարացիությունը[30]։ Սակայն, ընթերցելով Գ. Տեր-Մելքիսեդեկյանի ողբը, ստեղծվում է հակառակ տպավորությունը, քանի որ նա առաջարկում էր հեռացնել Ռուսաստանի մարմնի վրա առաջացած «վտան-

24 В. Т. Торнтон, նշվ. աշխ., էջ 90—91։

25 «Աշխատանք—Труд», 1879, № 1։

26 Կ. Ա. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 116։

27 Կ. Ա. Դանիելյան, Գ. Տեր-Մելքիսեդեկյանի հրապարակախոսական ժառանգության շուրջ («Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 176—188)։

28 Նույն տեղում, էջ 188։

29 Նույն տեղում, էջ 185։

30 Նույն տեղում։

դավոր սոցիալիստ հեղափոխական խոցերը»։ Բացի այդ, նա պարզորոշ պնդում է, որ ցարական չինովնիկների որոշ չարաշահումներ «ծնեցին տգետների մի մասսա, որոնք իրենց անզարգացությամբ սկսեցին այդ չարաշահումները ընդհանրական համարել»[31]։ «Ծածկախոսություն» վերծանելու այս մեթոդով թերևս հնարավոր կլիներ գրեթե բոլոր լիբերալ բուրժուական գործիչներին դասել դեմոկրատական ուղղությանը։ Կ. Դանիելյանը նշում է, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը Ու. Տորնտոնի «Աշխատանք» գրքից քաղագրել է մտքեր ու տեսակետներ, սակայն միևնույն ժամանակ ավելացնում է, որ «մեր դավառացի հրապարակախոսը ոչ միայն չի կռահում, այլև, միանգամայն անտեղյակ է տորնտոնյան հարցադրումների դասակարգային ռեակցիոն էությանը»[32]։ Բայց մի՞թե Գ. Տեր-Մելքիսեդեկյանը կարող էր չհասկանալ այն, ինչ ինքն էր հասկացնում մշակներին, այն, որ գոմարատերերը նրանց բարեգործներն են, որ մշակները պետք է աշխատեն նրանց համար «էն պայմաններով, ինչ պայմաններ, որ նրանք կառաջարկեն մշակներին»[33] և չհամարձակվեն «ձեռք բարձրացնել հարստի վրա քիչ վարձ ստանալու պատճառով»[34]։ Պարզվում է, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանն այստեղ նույնպես դիմել է «...ծածկախոսության»։ Չնայած մշակներին կշտամբելու արտաքուստ ընդգծված զայրացկոտությանը, այդուհանդերձ «մշակ դասի հանդեպ ունեցած խոր համակրանքն ու դասակարգային կողմնորոշումը նրան հանում է աշխատավորական խավերի սոցիալական շահերի պաշտպանության բնագծերը»[35],— գրում է Կ. Դանիելյանը։

Դժվար է կռահել, թե Կ. Դանիելյանն ինչ միտումով է վերացել Գ. Տեր-Մելքիսեդեկյանի վերոհիշյալ տողերի բուն իմաստից և գիտական ինչ սկզբունքով է առաջնորդվել, երբ դրանք մեկնաբանել է որպես «արտաքին որոշ կոպտություններ»[36]։ Բացի այդ, Կ. Դանիելյանն իր հոդվածում փորձում է նաև ցույց տալ, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը ոչ թե նույնությամբ վերարտադրել է Ու. Տորնտոնի «Աշխատանքը», այլ հակադրվել է նրան և որպես ապացույց մի շարք մեջբերումներ է կատարում Գ. Տեր-Մելքիսեդեկյանից։ Ահա դրանցից մեկը. «Մշակներին վնաս հասցնողն է իրենց սեփական աղքատությունը, որն առաջ է եկած իրանց զորությունից կանոնավոր օգուտ քաղել չկարողանալուց։ Էդ աղքատության ծանրությունը նրանց ճնշում և հաղթահարում է, չի տալիս նրանց հնար ապրել իրանց անկախ աշխատանքով ու նրանցից շատերին ստրկացնում է ուրիշների առջև մինչև նրանց վախճանվելը։ Ահա էդ տեսակ ճնշողության դեմ պիտի համախմբվեն մշակ մարդիկ, էդպիսի ճնշողության դեմ պիտի ուղղեն իրենց ճիգն ու զորությունները»[37]։ Ցավոք այս և մի շարք այլ մեջբերումներ, որոնք կատարել է Կ. Դանիելյանը՝ ապացուցելու համար, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը հակադրվել է Ու. Տորնտոնի հակաբանվորական տեսությանը, նույնպես վերարտադրված են վերջինիս «Աշխատանքից»։ «Ձեզ վնասում է... ձեր սեփական աղքատու-

31 «Աշխատանք—Труд», 1881, № 2։
32 «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 179։
33 «Աշխատանք—Труд», 1880, № 4։
34 Նույն տեղում, 1879, № 1։
35 «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 183։
36 Նույն տեղում, էջ 178։
37 «Աշխատանք—Труд», 1880, № 4։

թյունը։ Այդ աղքատության ծանրությունը ձեզ ճնշում և հաղթահարում է, հնարավորություն չի տալիս ապրել մենակ, ինքնուրույն աշխատանքով և ձեզնից շատերին մատնում է ցմահ ստրկության։ Այդպիսի ճնշման դեմ դուք պետք է պայքարեք։ Դրա դեմ ուղղեք ձեր ջանքերը»[38], — գրում է Ու. Տորնտոնը։

Կ. Դանիելյանը զուր է մեղադրում Գր. Տեր-Մելքիսեդեկյանին, որ նա մակերեսորեն է կարդացել Ու. Տորնտոնի աշխատությունը։ Գ. Տեր-Մելքիսեդեկյանի այն բոլոր մտքերը, որոնք Կ. Դանիելյանը հակադրել է «Տորնտոնի հակաբանվորական գաղափարախոսությանը»[39], նույնությամբ կարելի է կարդալ Ու. Տորնտոնի աշխատության այն գլուխներում, որտեղ խոսվում է բանվորական միությունների և նրանց դերի մասին։ «Աշխատանքի» խմբագիրը, ինչպես որ այդ հատուկ էր բոլոր դեմոկրատներին, հակված էր... խորապես մտահոգվել արհեստավորական-գյուղացիական զանգվածների տնտեսական աղքատության հետևանքներով»[40], — մեկնաբանում է Կ. Դանիելյանը։ Այս տողերով փաստորեն դեմոկրատների շարքին է դասվել նաև գռեհիկ տնտեսագետ Ու. Տորնտոնը։

Սակայն, ինչպես որ այդ հատուկ էր բոլոր բուրժուական գռեհիկ տնտեսագետներին, Ու. Տորնտոնին կարող էր մտահոգել աղքատության միայն մի հետևանքը. այն, որ վերջինս կարող է սոցիալական մեծ բախման պատճառ դառնալ։ Այդ պատճառով էլ նա ջանք չի խնայում հավատացնելու բանվորներին, որ նրանց աղքատությանը կապիտալիստներն ամենևին մեղսակից չեն, որ նրանք իրենց կապիտալները ոչ թե փոխ են առել բանվորներից, այլ կուտակել են աշխատասիրության և խնայողության շնորհիվ։ Բանվորների աղքատության պատճառը հենց իրենք են կամ նրանց հայրերն ու նախահայրերը[41]։ Այնպես որ «Թող խելքները գլուխները հավաքեն, լավ հասկանան մշակները, որ գումարատերերի այդ պաշարները նրանց՝ մշակների համար վատ բան չէ, այլ ընդհակառակը, իսկական բարեգործություն է...»[42], պարզաբանում է իր ուսուցչի միտքը Գ. Տեր-Մելքիսեդեկյանը։ Ու. Տորնտոնը և նրա հայ քարոզիչը բանվորներին հրավիրում են տնտեսական մրցության կապիտալիստների հետ՝ «աշխատանքի արդար վարձատրության» սկզբունքով, որը նրանց կարծիքով աղքատությունը հաղթահարելու միակ ուղին է։ Ահա այս գռեհիկ տեսությունն էր քարոզում իր շաբաթաթերթում Գ. Տեր-Մելքիսեդեկյանը։ Տեղին է նշել, որ Կ. Մարքսն իր նամակներից մեկում Ու. Տորնտոնի «Աշխատանքի» մասին գրել է, որ այն մալթուսականության վերարտադրությունն է չափազանց տնաբույս և տափակ ձևով[43]։ Այս ամենից հետո մեծ համոզվածությամբ կարելի է ասել, որ «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի էջերում չկա գյուղացիական դեմոկրատիայի գաղափարախոսը, Մ. Նալբանդյանի ուղղությանը զինվորագրված հրապարակախոսը, «աշխատավորների շահերի պաշտպանը»։

Այս հարցում մեզ համոզում է հենց ինքը՝ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, երբ

---

38 В. Т. Торнтон, նշվ. աշխ., էջ 136։

39 «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 181։

40 Նույն տեղում։

41 В. Т. Торнтон, նշվ. աշխ., էջ 91։

42 «Աշխատանք—Труд», 1880, № 4։

43 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 31, с. 312.

հեգնելով գրում է այն տնտեսագետների մասին, որոնց «ծանր է թվում տեսնել, թե ինչպես մշակները վարում, ցանում, հնձում և կալսում են... նրա համար միայն, որ ցորենը... լինի սեփականություն օտարի, թե ինչպես մշակը մանում և հյուսում է նրա համար միայն, որ էդ մանվածքին և հյուսվածքին տեր գառնան միայն տերերը, որոնց բան ու գործը էդ տնտեսագետների կարծիքով հենց միայն նրանումն է, որ հարստանան»[44]։ Գ. Տեր-Մելքիսեդեկյանն այդ տնտեսագետներին քննադատում է նաև այն բանի համար, որ նրանք գումարատերերին համարում են ձրիակերներ և դատարկապորտներ։ «Էդ տեսակ ընդհանրացած կարծիքը,— գրում է նա,— ...ոչինչ հիմք չունի, երբ մտածենք, որ գումարատերերի հարստությունը իր կարգով նույնպես հայտնի ֆիզիկական կամ մտավոր աշխատանքի արդյունք է»[45]։ Ահա Գ. Տեր-Մելքիսեդեկյանի գնահատականն այն ուղղության ներկայացուցիչներին, որոնց շարքն են դասել նաև իրեն։

«Աշխատանք—Труд» շաբաթաթերթում կան նաև հոդվածներ հայ վաճառականության և կոոպերատիվ պահեստների մասին։ «Կոոպերատիվ պահեստներ» հոդվածը նույնպես ամբողջությամբ վերարտադրված է Ու. Տորնտոնի հիշյալ աշխատությունից[46]։

Այսպիսով, «Աշխատանք—Труд» շաբաթաթերթում տպագրված տնտեսագիտական նյութերի վերլուծությունը վկայում է, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը վերարտադրել և պրոպագանդել է բուրժուական գռեհիկ տնտեսագետ Ու. Տորնտոնի հայացքները։ Այս հանգամանքը բացառում է համապատասխանության եզրեր գտնելու որևէ հնարավորություն այն կարծիքի հետ, ըստ որի Գ. Տեր-Մելքիսեդեկյանը հայ դեմոկրատական հասարակական-տնտեսագիտական մտքի ներկայացուցիչ է։

К ВОПРОСУ ОБ ЭКОНОМИЧЕСКИХ ВЗГЛЯДАХ ГРИГОРА ТЕР-МЕЛКИСЕДЕКЯНА

ГРАИР ТАМРАЗЯН

Резюме

В последние годы был найден комплект еженедельной газеты «Ашхатанк—Труд», что дало возможность более полно охарактеризовать общественно-экономические взгляды ее редактора Г. Тер-Мелкиседекяна.

В экономических статьях, опубликованных в газете «Ашхатанк—Труд». Г.Тер-Мелкиседекян выступает с позиций вульгарной, так называемой теории «справедливого вознаграждения труда», которая по существу является лишь одной из разновидностей известной в буржуазной вульгарной политэкономии «теории гармоний интересов». Исследование этих статей показывает, что они в основном являются воспроизведением книги английского вульгарного экономиста В. Торнтона «Труд».

---

44 «Աշխատանք—Труд», 1880, № 4։

45 Նույն տեղում։

46 В. Т. Торнтон, նշվ. աշխ., էջ 356։